<ՅՈՒՆԻԲԱՆԿ> ԲԲԸ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ 2021թ. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի բաժնետերեր և հյուրեր,

Թույլ տվեք ներկայացնել Ներքին աուդիտի 2021թ. հաշվետվությունը:

Տարեկան աշխատանքային ծրագրով Ներքին աուդիտն իրականացրել է մի շարք միջոցառումներ՝

1. Գլխամասային գրասենյակ

- Օպերացիոն վարչության գործունեության ստուգում:
- Արագ դրամական փոխանցումների գործընթացի ուսումնասիրություն:
- Կանխիկ դրամաշրջանառության գործընթացի ուսումնասիրություն:
- Վարկերի վերաֆինանսավորման գործընթացի ուսումնասիրություն:
- Մանրածախ վարկերի հետբերման գործընթացի ուսումնասիրություն:
- Մոնիտորինգի գործընթացի ուսումնասիրություն:
- Օտարերկրյա Հաշիվների Հարկային Համապատասխանության Ակտի (FATCA) պահանջների համապատասխանության ստուգում:
- Հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմանն ուղղված միջոցառումների/գործընթացների ստուգում:
- Ներքին աուդիտի հաշվետվություններում ներկայացված խնդիրների լուծման հետստուգման աշխատանքների իրականացում և այլն:

2. Տարածքային ստորաբաժանումներ

Ընդհանուր առմամբ տարվա կտրվածքով համալիր ստուգման են ենթարկվել թվով 15 մասնաճյուղ, 18 մասնաճյուղերում կատարվել են ուսկու գրավով վարկերի նպատակային ստուգումներ, 26 մասնաճյուղերում կատարվել են դրամարկղային հանգույցների գույքագրումներ, ինչպես նաև մի շարք բանկոմատների գույքագրումներ:

3. Արտապլանային ստուգումներ

Ներքին աուդիտը տարվա կտրվածքով իրականացրել է նաև արտապլանային աշխատանքներ, մասնավորապես՝

- Վճարային տերմինալների գույքագրում:
- Հաճախորդների բողոքների ուսումնասիրություն:
- Պլաստիկ քարտերի տարեկան սպասարկման վճարների գանձման գործընթացի ուսումնասիրություն:
- Հաշիվների կանխիկացման գործընթացի ուսումնասիրություն:
- Վարկային քաղվածքների ուսումնասիրություն և այլն:

Արձանագրված խնդիրների վերացման ուղղությամբ ձեռնարկվում են մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝

- կազմվում է արձանագրված խնդիրների վերացմանն ուղղված միջոցառումների ծրագիր, նշանակվում են պատասխանատու անձինք/ ստորաբաժանումներ և կատարման ժամկետներ՝ 10-90 օր՝ ելնելով ռիսկի աստիճանից, արձանագրված խնդրի բնույթից,

- իրականացվում է արձանագրված խնդիրների վերացման նկատմամբ հետհսկողություն՝ դրանց կրկնությունը բացառելու և Բանկի կառավարման մարմինների որոշումների կատարումը ստուգելու նպատակով:

Ներքին աուդիտի եզրակացությունը
ներքին հսկողության համակարգի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից սահմանված ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին <Յունիբանկ> ԲԲԸ-ի ներքին հսկողության համակարգի համապատասխանության եզրակացության համար հիմք են հանդիսացել՝

- Բանկի Ներքին աուդիտի 2021թ. տարեկան աշխատանքային ծրագրի շրջանակներում իրականացված վերստուգումները, դրանց արդյունքում ներկայացված առաջարկությունների ապահովմանն ուղղված միջոցառումները,
- ընթացիկ վերահսկողության և տարեկան աշխատանքային ծրագրի շրջանակներից դուրս Բանկի Ներքին աուդիտի իրականացրած վերստուգումները, դրանց արդյունքում ներկայացված առաջարկությունների իրագործմանն ուղղված միջոցառումները,
- ՀՀ ԿԲ կողմից արձանագրված խնդիրների վերացմանն ուղղված ձեռնարկված միջոցառումները,
- արտաքին աուդիտի վերստուգման արդյունքների հիման վրա <Նամակ ղեկավարությանը> փաստաթղթով ներկայացված առաջարկությունների կատարման վերստուգումները:

Բանկի ներքին հսկողության համակարգում արձանագրված խնդիրները ձեռնարկվող միջոցառումների արդյունքում լուծված են կամ գտնվում են կարգավորման փուլում, ինչը հիմք է տալիս եզրակացնելու, որ <Յունիբանկ> ԲԲԸ-ի ներքին հսկողության համակարգը համապատասխանում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին:

Ներքին աուդիտի տնօրեն
Արթուր Ղուկասով
08.06.2022թ.